ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

---

01.06.2022թ.

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Այսօր հունիսի 1-ն է՝ երեխաների պաշտպանության օրը, ինչի կապակցությամբ շնորհավորում եմ մեր երեխաներին՝ մաղթելով անհոգ, անցավ ու երջանիկ մանկություն:

Սիրելի՛ երեխաներ,

թող ձեր կյանքը լինի նույնքան լուսավոր, որքան ձեր երազանքներն են, իսկ մենք՝ մեծերս, ամեն ինչ պետք է անենք, որ ձեր երազանքներն իրականություն դառնան, որ ձեր ամեն օրը տոն լինի ու ձեր մանկությունը վայելեք խաղաղ երկնքի ներքո:

Մենք՝ մեծերս, ձեզանից սովորելու շատ բան ունենք՝ մաքրություն, անկեղծություն, անմիջականություն և լավատեսություն:

Սիրելի՛ երեխաներ,

ևս մեկ անգամ շնորհավորում եմ և մաղթում, որպեսզի մշտապես շրջապատված լինեք սիրով, ջերմությամբ և ամենակարևորը, լինեք առողջ ու հաջողակ:

Շնորհավոր հունիսի 1:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ